Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
14-02-2025 թվականի N 53-L որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի փետրվարի 17–ից

GetTransfer ծառայության դիմաց կատարված վճարումների համար cashback-ի տրամադրման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 01.01.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված քարտեր:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 01.01.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ www.gettransfer.com կայքում, ինչպես նաև համապատասխան բջջային հավելվածում կատարված վճարումների (այսուհետ՝ Վճարում) դիմաց Քարտապանները կստանան cashback հետևյալ տրամաբանությամբ՝

- 5% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում.
  - Mastercard Standard
  - Mastercard Gold
  - Visa Idram Rocket
  - Visa Digital
  - Visa Gold
  - այլ ստանդարտ դասի քարտեր:
- 9% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում.
  - Visa Business
  - Visa Business Platinum
  - Visa Platinum
  - Visa Signature
  - Visa Infinite
  - այլ բիզնես և պրեմիում դասի քարտեր:
- 10% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում.
  - Travel
  - Visa Infinite Special Edition

Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են համապատասխան վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրով, որոնք հրապարակված են Բանկ կայքէջում:
2.2 Յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտապանին փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:
2.3 Քարտապանների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.4 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: